ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060-88-89-99, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 օգոստոսի 2023 թվականի N 849-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով Սամվել Թորգոմի Խաչատրյանի դիմումը և այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Այգեշատ գյուղում գտնվող 04-011-0010-0031 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ հողերի՝ 0,002 հա հողամասի վրա ինքնակամ կառուցված 20 քմ արտաքին մակերեսով արտադրական նպատակային նշանակության պահեստի կառուցման աշխատանքները իրականացվել է Սամվել Թորգոմի Խաչատրյանի /անձնագիր AL0204045, տրված 07.04.2023թ., 057-ի կողմից/ կողմից.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սամվել Թորգոմի Խաչատրյանին ուղղակի վաճառքով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Այգեշատ գյուղի 04-011-0010-0031 կադաստրային ծածկագրի տակ գտնվող՝ 0,002 հա հողամասը և 20 քմ արտաքին մակերեսով շինությունները /հիմք/ օտարել, հողամասի համար 15840 / տասնհինգ հազար ութ հարյուր քառասուն / ՀՀ դրամ պետք է վճարի ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Այգեշատ գյուղի ֆոնդային եկամուտների 900325157130 հաշվեհամարին, իսկ շինության համար 41120 / քառասունմեկ հազար մեկ հարյուր քսան / ՀՀ դրամ պետք է վճարի ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի վարչական եկամուտների 900325188150 հաշվեհամարին: 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
2. Սամվել Թորգոմի Խաչատրյանի հետ կնքել հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները պետական գրանցման:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԼԵՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ

2023թ. օգոստոսի 21
Խոյ համայնք, գ. Գեղակերտ